ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն

<<Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան>>
հիմնադրամ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսուցման ակտիվ մեթոդները պատմության դասերին, որպես սովորողների ներգրավվածության միջոց

Ուսուցչուհի՝ Մարիամ Մնացականյան

(Մեծ Սարիար միջնակարգ դպրոց ՊՈԱԿ)

Վերապատրաստող դասախոս՝ Արշավիր Գասպարյան, պ.,գ.,թ., դոցենտ

1.Ներածություն

Հետազոտական աշխատանքիս թեման է <<ՈՒսուցման ակտիվ մեթոդների կիրառումը պատմության դասին՝ որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց>>:

Այս թեման ես կարևորում եմ, քանի որ ուսուցումը չի կարելի կազմակերպել և

անցկացնել առանց ուսուցման մեթոդների: ՈՒսուցման մեթոդները պատմության դասին հանդիսանում են ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոց : Ինչպես ասում էր հայտնի մանկավարժ Մ.Ն.Սկատկինը , մեթոդը ճանապարհ է ,որով ուսուցիչն աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք, անկարողությունից դեպի կարողություն, նրա մտավոր ուժերի զարգացման ուղի:

Չէ՞ որ մեթոդներն են պատասխանում ինչպե՞ս սովորեցնել հարցին: Այդ իսկ պատճառով դասավանդման հաջողության կարևոր պայմաններից մեկը ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունն է, որի լուծումից էլ կախված է դասի արդյունավետությունը, և առավել ևս սովորողների ներգրավվածությունը:

Ցանկացած ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ,

դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք:

Արդի փուլում դպրոցին անհրաժեշտ են ճանաչողական ակտիվություն ու

ստեղծագործական կարողություններ, հետևապես նաև տեսական մտածողություն

ցուցաբերող աշակերտներ: Դասավանդման մեթոդի սուբյեկտը և օբյեկտը աշակերտն է:

Ուստի մեթոդներն ուսուցմանը պետք է տան զարգացնող բնույթ՝ դասը դարձնելով

աշակերտակենտրոն: Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել

այնպիսի մեթոդների համակարգ ,որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում

պատրաստի գիտելիք, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝

ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում, և այս է իմ գլխավոր նպատակը պատմության դասին: Դասավանդման հաջողության կարևոր պայմաններից էլ մեթոդի ճիշտ ընտրությունն է: Մեթոդների ընտրության հարցը մանկավարժական բարդ խնդիր է ,որի ճիշտ լուծումից է կախված դասի և ուսուցման արդյունավետությունը:

Ակտիվ մեթոդների կիրառման նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն):

2. ՈՒսուցման ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց

Ակտիվ ուսուցումը ենթադրում է մեթոդների այնպիսի համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացն ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքների ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ իսկ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդ: Գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է սովորողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում, նրանց ներգրավվածությունը: Հաշվի առնելով այս չափանիշները ուսուցման մեթոդները դասակարգվում են ավանդական(պասիվ) և ակտիվ (ինտերակտիվ):

Ակտիվ մեթոդները,պատմության դասին, պետք է կիրառել ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:Դրանք սովորողի և ուսուցչի համագործակցությունն է միմյանց հետ,երբ սովորողները ուսուցման գործընթացում հանդես են գալիս որպես

ակտիվ մասնակիցներ։Այս ուսուցման մեթոդներն ապահովում են սովորողների արդյունավետ, ստեղծագործական գործունեությունը դասը դարձնելով աշակերտակենտրոն։Այսպիսով ակտիվ ուսուցման մեթոդ նշանակում է ուսուցում գործունեության մեջ։ Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է,որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ։Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և սովորողների, այնպես էլ իրենց,սովորողների միջև։

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ, որը պայմանավորված է նրանով,որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր սահմանում։ Այս մեթոդները նպաստում են սովորողների ճանաչողական գործունեությանը և բնութագրվում են նրանց ակտիվության և ներգրավվածության բարձր մակարդակով։ Սրանք ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

1.ուսումնական դրական խթանի ձևավորում

2.սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում

3.կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում

4.ինքնագործունեության խթանում

5.ճանաչողական գործընթացի զարգացում՝խոսք,հիշողություն,մտածողություն

6.նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում

7.ստեղծագործական մտածելակերպի զարգացում

8.սովորողների անհատական հաղորդակցական զգայական ոլորտի զարգացում

9.սովորողների անհատական յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում

10.ինքնուրույն աշխատանքի համար հնտությունների զարգացում

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչը և աշակերտը շփվում են միմյանց հետ դասի ժամանակ և

սովորողներն այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ։ Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձն ուսուցիչն է, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա է՝ սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ։ Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվը՝ ժողովրդավարական ոճով։ Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ի՞նչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշել, որ մեթոդներն ու հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ, ուստի ուսուցիչները պետք է ընտրեն մեթոդներ, որոնք լավագույնս կօգնեն սովորողներին և կհեշտացնեն սովորելն ու կիրառելը։ Այսպիսով, ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը պատմության դասերին նպաստում է ուսումնական դրական խթանի ձևավորմանը, սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը։ Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները։

Ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնք նպաստում են ճանաչողական գործունեությանը։ Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ։Ակտիվ ուսուցման մեթոդները բնութագրվում են սովորողների ակտիվության բարձր մակարդակով։Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից և բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից։

Պատմության դասավանդման շատ ռազմավարություններ և մեթոդներ կան, և ուսուցիչը պետք է իմանա դրանք, որպեսզի կարողանա ընտրել, թե որն է ամենահարմարը կախված առրթից, սովորողներից և ուսուցանվող բովանդակությունից։ Ինչ էլ որ դասավանդվի, էական է, որ իմաստալից ուսուցում ստանալու համար ուսուցիչը իր դասերը դարձնի հաճելի, բեղմնավոր, և դա

առաջացնի իր աշակերտների հետաքրքրությունը, հետաքրքրասիրությունն ու մոտիվացիան։

Ժամանակակից մանկավարժությունը դասավանդման գործընթացի կազմակերպման լայն հնարավորություններ է ընձեռում և առաջ է բերում ուսուցման մեթոդների փոփոխության անհրաժեշտություն։ ՈՒսուցման նախկին ձևերն ու մեթոդները չեն կարող լիովին բավարարել նոր պահանջները։ Սակայն ակտիվ կամ նոր մեթոդներ արտահայտությունը չպետք է ոչ վախեցնի և ոչ էլ զարմացնի ուսուցիչներին։ Որոշ վերապահությամբ կարելի է ասել՝ հին(ավանդական) և նոր(ակտիվ) մեթոդներ չկան։ Կա միայն տասնամյակների փորձով ստեղծված մեթոդական հարուստ զինանոց, որից օգտվում է ուսուցիչը՝ ելնելով ժամանակի պահանջներից և իր առջև դրված խնդիրներից։ Հին ասացվածքն ասում է, որ ուսուցման նթր մեթոդները սովորելու լավագույն ճանապարհը հենց մեթոդի միջոցով սովորելն է։ Հնարավոր չէ գտնել մեկ հրաշալի մեթոդ, որը կարողանա լուծել ուսուցման առջև ծառացած բոլոր խնդիրները։ Փորձը հուշում է,որ դասավանդման ընթացքում լավագույն արդյունքը կարող է ապահովել ավանդական և ակտիվ մեթոդների համադրումը։

Ավանդական մեթոդները ժամանակին հաջողությամբ լուծել են աշակերտի գիտելիքների համակարգի ձևավորման և դաստիարակության խնդիրներ։ Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի(գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները։ Դասարանն այժմ դիտվում է որպես աշակերտների հաստատուն համակազմով ինքնակառավարվող փոխգործուն աշխատանքային խումբ, որն ուսուցչի ղեկավարությամբիրականացնում է ակտիվ գործընթաց։ Դասարանում աշակերտի գործունեության հիմնական ձևն այս դեպքում դառնում է փոքր խմբերով աշխատանքը և դրան համապատասխան նոր մեթոդները։ Երկար տարիներ արմատացած ավանդական մեթոդներին դժվարությամբ, բայց փոխարինելու է գալիս փոխներգործուն՝ակտիվ մեթոդաբանությունը, որի նպատակը միաբևեռ ուսուցումը բազմաբևեռ դարձնելն է։ Եվ սա միայն տեխնիկական

գործընթաց չէ, որը հեշտությամբ հնարավոր կլինի ներդնել ուսումնառության մեջ, այլ նորամուծությունները մտածելակերպ և կենսակերպ դարձնելու հնարավորություն։ Այս առումով դժվարությունները և խնդիրները շատ են։ Քանի որ որոշ դասավանդողներ ընդդիմանում են նորամուծություններին՝ համարելով, որ այսօր էլ դասավանդողն է միակ հեղինակությունը, որի միջոցով սովորողն ստանում է այն հիմնական գիտելիքն ու հմտությունը, որոնք պետք են նրան։ Դասավանդողների մի ստվար շերտ էլ կարծում է, որ դասավանդման ակտիվ մեթոդներն իսկապես անհրաժեշտ են. վերջիններս պատրաստակամությամբ կիրառում են դրանք, սակայն հաճախ այդ ամենն արհեստական բնույթ է կրում։ Պատճառը թերևս այդ մեթոդները ոչ տեղին և ոչ այնքան ճիշտ կիրառելն է։ Եվ ահա դասավանդողների երրորդ, ամենափոքր խումբը սիրով է կատարում իր՝ օժանդակողի, օգնողի, ոչ հրահանգավորողի դերը՝ հասկանալով, որ նա այսօր ընդամենը ուղեկցողի, կողմնորոշողի դերակատարություն ունի։

Այսօր այլ են սովորողների պահաջներն ու մտածելակերպը, աշխարհայացքն ու հետաքրքրությունների շրջանակը, քան տասը տարի առաջ, և դասավանդողից պահաջվում են նոր հմտություններ, մասնագիտական և մանկավարժական նոր որակներ՝ կրթության գործընթացն արդյունավետորեն կազմակերպելու համար։

Տեղեկատվական աղբյուրներն ու հնարավորությունները 21-րդ դարում այնքան շատ ու բազմազան են, որ դասավանդողը հաճախ մղվում է երկրորդ պլան՝տեղը զիջելով տեղեկատվական տեխնոլոգիաներին։ Այս դեպքում նրան օգնության են հասնում հենց փոխներգործուն, աշակերտակենտրոն մոտեցումները, որոնք կարելի է անվանել դասավանդման նորագույն գործիքներ՝ ուսուցման ակտիվ մեթոդներ։

Մեթոդի բաղկացուցիչ մասն են հնարները։ Հնարը մեթոդի տարրն է, կամ նրա մասնակի դրսևորումը։ Մեթոդական հնարները կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված գործողություններ են։ ՈՒսուցման ժամանակ մեթոդը կարող է ունենալ բազմազան կիրառակն հնարներ։ Հնարավոր է, որ միևնույն հնարը հանդես գա տարբեր մեթոդներ կիրառելիս։ Բացի այդ՝ դասավանդելիս հնարը կարող է հանդես գալ որպես մեթոդ։ Օրինակ՝ կինոդասերի ժամանակ ցուցադրումը դառնում է մեթոդ, իսկ պատմելը՝ հնար։

ՈՒսուցիչը պատմության դասի տարբեր փուլերում անդրադառնում է դասի մեթոդական ապարատին և կիրառում տարբեր մեթոդներ ու հնարներ՝հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, գիտելիքների մակարդակը։

Ակտիվ ուսուցումը ներառում է ամենատարբեր մեթոդներ, հնարներ և վարժություններ, որոնց մի քանի գործուն և արդյունավետ տեսակների կոնկրետ կիրառությանը կանդրադառնանք պատմության դասերին։

3.Երաշխավորվող մեթոդներ

Մտքերի տարափ։

Մտքերի տարափը կամ մտագրոհը խմբային կամ թիմային աշխատանքի պարզ,բայց արդյունավետ մեթոդ է։Դրա գլխավոր գործառույթը մտքերի խմբավորումն է։ Մտագրոհի համար նպատակահարմար է ընտրել դասի հետ կապված որևէ բառ, արտահայտություն, գաղափար։ Սովորողների առջև խնդիր է դրվում պարզապես բառեր թվարկելու՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի։

Արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են։ Ընդունված է համարել,որ մտքերի տարափի ընթացքում սխալ մտքեր չկան. հնչած բոլոր մտքերը ճիշտ են և ընդունելի։ Սրա կիրառումը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը և սովորողների ներգրավմանը, այն օգտագործվում է խթանման փուլում։ Նպատակն է վերհանել նախնական գիտելիքները, խթանել աշակերտների հետաքրքրությունը, գրավել ուշադրությունը, այսինքն՝ կապ ստեղծել դասավանդելիք նյութի հետ։

Հասկացությունների քարտեզ։

Քարտեզագրումը կազմվում է հետևյալ կերպ՝ նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը, կամ հասկացությունը, որի շուրջ գրի են առնվում ուղեկից հասկացությունները, մտքերն ու գախափարները։ Քարտեզի ճյուղերը տարածվում են

նաև ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է ծնող բառի հետ, իսկ միևնույն ծնողն ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ՝ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ:

Բանավեճ:

Բանավեճն հաջող սկսելու համար խիստ կարևոր է, որ սովորողները նախապես հստակ պատկերացում ունենան բանավեճի նյութի և անցկա[redacted]ի վերաբերյալ: Բանավեճի ընթացքում ուսուցչից պահանջվում է դիտել, [redacted]լ, ուղղորդել, բայց ոչ կարգադրել կամ սեփական տեսակետներ պա[redacted]ս հիմնական գործառույթը հարցերի միջոցով ուղղորդումն է: ՈՒսուցիչը պետք է ճիշտ ընտրի և կիրառի հարցերը, որպեսզի դրանց միջոցով խթանի քննարկումը և սովորողների ինքնուրույն մտածողությունը:

Խճանկար:

Անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են տարբեր ուղղություններով: Խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում ողջ դասարանի սեփականությունը: Նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքի արդյունքները: Մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, միաժամանակ հանդես են գալիս և սովորողի և սովորեցնողի դերում:

Պրիզմա:Պրիզման հին ու նոր փորձված մեթոդ է: Այն սիրված է աշակերտների կողմից և լայնորեն կիրառվում է ուսումնառության մեջ:Այն բավականին արդյունավետ է պատմության դասերին: Պրիզման հիմնականում կիրառվում է դասի սկզբնական փուլում՝ ապահովելով սովորողների հետաքրքրությունը և դասի հաջող մեկնարկը: Բայց կարելի է օգտագործել նաև նյութի ամփոփման փուլում: Նոր տերմինի կամ թեմայի բացահայտումը կատարվում է քայլ առ քայլ ուղղահայաց

հերթականությամբ: Մասնակիցները ուսուցչի կողմից ասված հասկացության վերաբերյալ 2 այլ հասկացություն են ասում , հետո ասված 2 հասկացությանը բնորոշ 2-ական հասկացություն են ավելացնում, այնուհետև արդեն ասված հասկացությունները միավորում են այլ բառերով և ստանում վերջնաբառը, որը որոշ իմաստով կապ ունի մեկնաբառի հետ: սովորողների ներգրավվածությունը:



Վենի դիագրամ:

Համեմատության այս տարածված եղանակը, պատմության դասին, կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձանց միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:Այն հիմնականում կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն որտեղ և նշվում են ընդհարությունները, իսկ չհատվող հատվածներում՝ տարբերությունները:



ՏՀՏ օգտագործումը պատմության դասին:

Ժամանակակից կրթության բնագավառում դասի անցկացումն անհնար է թվում առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության։Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և այլ բացառիկ հնարավորությունները , պատմության դասը կարելի է դարձնել պարզ, դիտողական։Պատմությունը բարդ ու ծավալուն առարկա է, և համակարգիչը կարող է օգնել ուսուցչին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար։ Պատմության դասաժամին կարևոր է նաև ուսուցման դիդակտիկ մեթոդների կիրառումը, այն է համապատասխան նկարների, քարտեզների օգտագործում, ինչպես նաև տեխնիկական միջոցների ՝ դիաֆիլմերի ու մագնիտոֆոնային ձայնագրությունների կիրառում և իհարկե համակարգչային տեխնիկայի օգտագործում, որը շատ արդյունավետ է և ունի լայն ու բազմաբովանդակ հնարավորություն։ՍՀՍ-ի միջոցով իրականացվող պատմության դասերը հետաքրքիր են և ուսանելի։

Արդյունավետ են գործում նաև ավանդական և ժամանակակից հետևյալ մեթոդները՝ դասախոսություն, զրույց, դերային խաղ, կարկանդակ, քառաբաժան, փոխգործուն նշանների համակարգ, T-աձև աղյուսակ, m-աձև աղյուսակ և այլն։

Ամեն մի կոնկրետ իրադրության մեջ կատարելով մեթոդների համապատասխան ընտրություն և դրանց փոխկապակցում՝ ուսուցիչն ինքն է հայտնագործում իր մեթոդը և ազատ ու անկաշկանդ կիրառում այն։

4.Եզրակացություն

Այսպիսով, կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը: Մեթոդական նորանոր մոտեցումներ մշակելն ու կյանքի կոչելը, ինչպես նաև արդեն ասպարեզում եղած մեթոդական զինանոցը տեղին ու արդյունավետ կիրառելը ժամանակի հրամայականն են, քանզի դրանցով է պայմանավորված սովորողների՝ գիտելիքի, հմտությունների, կարողությունների ձեռքբերման արդյունավետությունը: Դրանք օգնում են դասարանում ապահովելու հետաքրքրություն և ուշադրություն՝ մատուցում-ընկալում ավանդական գործընթացը դարձնելով ավելի արդյունավետ: Մեթոդական տարատեսակ հնարների, բազմաբնույթ առաջադրանքների ու վարժությունների տեղին կիրառումը ուսուցման ողջ գործընթացը դարձնում է աշխույժ և ուղղորդված, ինքնանպատակ դասվանդումը հետ է մղվում՝ իր տեղը զիջելով մեթոդապես երաշխավորված և գործնական խնդիրների լուծմանն ուղղված ուսումնառությանը: Ակտիվ մեթոդների կիրառման

նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները։

ՈՒսուցման ժամանակակից մեթոդների հիմքում սովորողի ինքնուրույնությունն է, նրա անմիջական, ակտիվ մասնակցությունն այդ գործընթացին։ Նման ուսուցման ժամանակ սովորողը պասիվ ընկալողից վերաճում է հայտնագործողի, հետազոտողի։

Որևէ մեթոդ կիրառելուց առաջ անհրաժեշտ է ճանաչել երեխաներին, հասկանալ նրանց հետաքրքրությունները և փոքր ինչ ճկունություն գործի դնելով հնարը կամ մեթոդը համապատասխանեցնել սովորողների նախասիրություններին։ Փորձը հուշում է, որ դասավանդման ընթացքում լավագույն արդյունքը կարող է ապահովել ավանդական և ակտիվ մեթոդների համադրումը։ Հետևաբար ակտիվ մեթոդները չպետք է հակադրել ավանդականին։ Բոլոր մեթոդները և հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել։ Փաստորեն , այսպես կոչված նոր մեթոդները նոր խնդիրների լուծմանը ծառայող մանկավարժական զինանոցում արդեն եղած մեթոդներն են, որոնք ստանում են նոր իմաստ, երանգ,ու շեշտադրում։

<<Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ։ Այն պահից , երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը։>>

Բ.Ֆ.Սքիներ

Գրականություն

1.Балаев А.А., Активные методы обучения. М.2006

2.Выготский Л.С., Педагогическая психология

3.Алехин А. Ю., Общие методы обучения в школе, К. Радяньска школа.1983

4.Гузеев В.В., Методы и организационные формы обучение, М. 2001

5.Kagan , S (1994) Coopetative learning.

6.Համագործակցային ուսուցում, Ջեռնարկ, Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս.Խրիմյան և ուրիշ., Անտարես, Երևան, 2006

7.Գ. Վարդանյան, Հին ու նոր մեթոդները դասավանդման արդի փուլում ,Երևան, 2019

8.Ս. Խաչատրյան, ՈՒսուցման արդյունավետ հնարներ,Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան, 2020

Բովանդակություն

1.Ներածություն----------1

2.Ակտիվ մեթոդները որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց-3

3.Երաշխավորվող մեթոդներ----------7

4.Եզրակացություն----------11

5.Գրականության ցանկ----------15